Պարույր Սևակ

Իմ կտակը 5

Ուժեղին հետո մահակ են սարքում:
Ուժեղն ի՞նչ անի - խեղճերն են սարքում:
Մահակ են սարքում՝ ուժեղի գլխին,
Բայց այն ուժեղի, որ նոր է եկել:
Դու, հարազա՛տը, որ գալու ես դեռ,
Պաշտպանի՛ր հորը,
Որ չխեղճանա խեղճերի կողմից:
Եվ դա կարող ես անել շա՛տ դյուրին:
Հենց որ ինձանից խարազան շինեն՝
Մեջք ու թիկունքիդ,
Հենց որ քո գլխին ինձ դարձնեն մահակ,
Հենց որ խուփ դարձնեն քո բերնին,
Գիտցի՛ր,
Որ դո՛ւ ես կյանքում իմ հարազատը,
Որ իմը դո՛ւ ես,
Հենց դո՛ւ ես ու կաս,
Ու եթե հայրը դպրելիս լիներ,
Կյանքում կլիներ քեզ հետ միասին՝
Ընդդեմ խեղճերի,
Որ իմ անունով
Հիմա ջանում են բերանը փակել:

20.XII.1959թ.
Թիֆլիս

Յատուկ Պոեմ